ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆՈՂ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հունիս 2021
Հեղինակ՝ Արա Ղազարյան

Չնայած Հայաստանի և Թուրքիայի սահմանը փակ է 1993 թ., առկա է ուղևորների զգալի շարժ Թուրքիայի և Հայաստանի միջև: Հարկ է նշել, որ այցելությունների թիվը մեծանում է ոչ միայն Հայաստանից Թուրքիա, այլև հակառակ ուղղությամբ: 2009-2019 թթ. Թուրքիայի մոտ 110 հազար քաղաքացի է այցելել Հայաստան:[1] Հիմնականում նշվում են այցերի հետևյալ նպատակները՝ զբոսաշրջություն, բիզնես և կրթություն: Վերջին տարիներին բացի ժամանակավոր այցերից՝ Թուրքիայի քաղաքացիների շրջանում գրանցվել են նաև մշտական կացության կարգավիճակ ստանալու նպատակով այցեր: Այս դեպքերի հիմքում ընկած պատճառները կապված են թուրքական այն բիզնեսների աճող թվով, որոնք սկսել են ներդրումներ անել և գործել Հայաստանում՝ Երևանում բացելով խանութներ և գրասենյակներ:[2] Թուրքիայի քաղաքացիները կարող են բախվել մի շարք խնդիրների թե՛ ժամանակավոր այցերի, թե՛ Հայաստանում երկարաժամկետ կացության պարագայում: Դիվանագիտական հարաբերությունների բացակայության պատճառով այս խնդիրների կարգավորման համար անհրաժեշտ հյուպատոսական կառուցակարգեր առկա չեն, ինչի պատճառով շատ հաճախ այս անձինք հայտնվում են անորոշության մեջ, և իրենց հասու տեղեկատվությունը կարող է բնույթով ապակողմնորոշող լինել:

Թեև Թուրքիայի քաղաքացիների՝ Հայաստանում ունեցած որոշ խնդիրների և դժվարությունների դեպքում հնարավոր է լուծում գտնել, կան մի շարք այլ խնդիրներ, որոնք անհնար է հարթել առանց հյուպատոսական ծառայությունների առկայության: Օրինակ՝ Հայաստանում բնակվող Թուրքիայի քաղաքացիները չեն կարող իրացնել ընտրելու իրենց իրավունքը, քանի որ նրանք ստիպված են գնալ Վրաստան՝ Թուրքիայի հյուպատոսական ներկայացուցչություններում քվեարկելու համար, իսկ դա լրացուցիչ անհարմարություններ կարող է առաջացնել: Արդյունքում նրանք հիմնականում չեն մասնակցում ընտրություններին: Մեկ այլ խնդիր էլ վերաբերում է Թուրքիայից Հայաստանում քաղաքական ապաստան հայցողներին, քանի որ ներկա պայմաններում համապատասխան կառուցակարգերը դարձյալ բացակայում են:

Ուստի այս փաստաթուղթը նպատակ ունի լրացնելու Թուրքիայի և Հայաստանի միջև հյուպատոսական հարաբերությունների բացը՝ անդրադառնալով առնվազն այն հարցերին, որոնք ինչ-որ կերպ հնարավոր է շրջանցել կամ լուծել: Այսպիսով՝ սույն փաստաթուղթը տրամադրում է տեղեկություններ մուտքի արտոնագրի և կացության թույլտվության ստացման ընթացակարգերի, արտաքսման, ազատազրկման, արտահանձնման, ապաստանի հայցման, սեփականության իրավունքի, դրամական փոխանցումների և իրավական աջակցության մասին, որոնց վերաբերյալ Թուրքիայի քաղաքացիները հարկ է, որ տեղյակ լինեն ինչպես Հայաստան մեկնելիս, այնպես էլ Հայաստանում գտնվելիս:

Արա Ղազարյանը Հայաստան-Թուրքիա փորձագետների երկխոսության խմբի անդամ է, Հայաստանում մարդու իրավունքների ոլորտի առաջատար փաստաբաններից: Նա մարդու իրավունքների թեմայով վերապատրաստում է իրավաբանների և լրագրողների: Բազմակողմանի ուսումնասիրություններ է իրականացրել մարդու իրավունքների վերաբերյալ:

Հայաստան-Թուրքիա փորձագետների երկխոսության խումբը երկու երկրներից փորձագետների համատեղ նախաձեռնություն է՝ բաղկացած քաղաքականության, դիվանագիտության, գիտության և քաղաքացիական հասարակության ոլորտի մասնագետներից, ովքեր պատրաստ են աջակցելու Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը տարբեր մակարդակներում: Երկխոսության խումբը ձևավորվել է 2016 թ.: Երկխոսության խմբի հիմնական նպատակը երկու հարևանների միջև հարաբերությունների կարգավորմանը նպաստող վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումների մշակումն է: Երկխոսության խումբը մասնավորապես հետաքրքրված է առևտրի և բիզնեսի, միգրացիայի, կրթության և մշակույթի ոլորտների հնարավորություններով և նորարարական գաղափարներով:

Մուտքի արտոնագիր (վիզա) և կացության թույլտվություն

Թուրքիայի քաղաքացիները կարող են մուտքի արտոնագիր ձեռք բերել կա՛մ Հայաստան ժամանելու պահին,[3] կա՛մ առցանց՝ էլեկտրոնային եղանակով՝ E-visa համակարգի միջոցով:[4]

Մուտքի արտոնագրի տեսակները հետևյալն են՝

- Այցելության մուտքի վիզա. այցելության մուտքի վիզան տրվում է այն դեպքերում, երբ օտարերկրացին մտադրություն ունի մուտք գործել Հայաստան զբոսաշրջության, հարազատներին կամ այլ անձանց այցելության, աշխատանքային, տրանսպորտային և մասնագիտական գործունեությանն առնչվող այլ հարցերի, բուժօգնության կամ այլ նպատակներով՝ կարճաժամկետ տևողությամբ: Այցելության մուտքի վիզան տրվում է մեկանգամյա կամ բազմակի մուտքերի հնարավորությամբ, մեկ տարի վավերականության ժամկետով:
- Տարանցիկ մուտքի վիզա. մեկանգամյա կամ բազմակի մուտքի արտոնագիր՝ Հայաստանում 3 օրից ոչ ավելի տևողությամբ գտնվելու և առավելագույնը 4 օրով երկարաձգելու հնարավորությամբ, մեկ տարի վավերականության ժամկետով:

Այցելության և տարանցիկ վիզաները տրվում և դրանց ժամկետները երկարաձգվում են ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից, որը հայտնի է նաև ՕՎԻՐ անվանմամբ:
Հայկական վիզաները տրվում են առավելագույնը 120 օր ժամկետով՝ ևս 60 օր երկարաձգման հնարավորությամբ, եթե որևէ այլ ժամկետ չի նախատեսված Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերով:
Ըստ Պետական վճարների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի՝ 2021 թ. հունիսի դրությամբ, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստան մուտք գործելու համար պետք է վճարեն սահմանային անցակետերում՝[5]

- Այցելության մուտքի վիզայի համար.
  - 15,000 ՀՀ դրամ (մինչև 120 օր ՀՀ-ում գտնվելու համար),
  - 3,000 ՀՀ դրամ (մինչև 21 օր ՀՀ-ում գտնվելու համար),
- բազմակի մուտքի վիզաների համար՝
  - 40,000 ՀՀ դրամ (մինչև 120 օր ՀՀ-ում գտնվելու և վիզայի 1 տարի վավերականության ժամկետի համար),
  - 20,000 ՀՀ դրամ (մինչև 60 օր ՀՀ-ում գտնվելու և վիզայի 6 ամիս վավերականության ժամկետի համար),
- տարանցիկ վիզայի համար՝
  - 10,000 ՀՀ դրամ մեկանգամյա մուտքով տարանցիկ վիզայի համար,
  - 18,000 ՀՀ դրամ բազմակի մուտքով 1 տարի վավերականության ժամկետով տարանցիկ վիզայի համար:[6]

Թուրքիայի քաղաքացիները պետք է նկատի ունենան, որ վիզայի համար վճարումը պետք է կատարվի բացառապես հայկական դրամով (AMD), բացի այդ, նրանք չեն կարող թուրքական լիրան (TRY) փոխարկել ՀՀ դրամի նախքան Հայաստան մուտք գործելը կամ Հայաստանում գտնվելու ընթացքում: Նրանք պետք է թուրքական լիրան փոխանակեն եվրոյի կամ ԱՄՆ դոլարի նախքան Թուրքիայից մեկնելը, այնուհետև այն վերածեն ՀՀ դրամի օդանավակայանում կամ ՀՀ տարածքում տարադրամի փոխանակման գրասենյակներում և/կամ բանկերում իրենց՝ Հայաստանում գտնվելու ընթացքում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Հայաստանի ողջ տարածքում կան բանկոմատներ, և մաստեր կամ վիզա քարտերը լայն գործածության մեջ են: Կանխիկ դրամ կարելի է ստանալ բանկոմատներից միայն ՀՀ դրամով:
Էլեկտրոնային վիզան տրամադրվում է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Նախարարությունը իրավասություն ունի պահանջելու ցանկացած հավելյալ տեղեկատվություն և փաստաթղթեր: Էլեկտրոնային վիզայի համար հնարավոր է դիմել միայն այցելության մուտքի վիզայի պարագայում՝ թե՛ կարճաժամկետ (մինչև 21 օր), թե՛ երկարաժամկետ (մինչև 120 օր) այցերի նպատակով: Համապատասխան վիզայի համար սահմանված պետական տուրքը գործում է նաև էլեկտրոնային վիզայի դեպքում՝ ավելացրած սպասարկման համար նախատեսված փոքր դրույքաչափ: Հատուկ, ծառայողական և դիվանագիտական անձնագրեր ունեցողները չեն կարող ՀՀ մուտքի արտոնագիր ստանալ էլեկտրոնային համակարգով:
Վերը նշված պայմանները վերաբերում են Թուրքիայի միայն այն քաղաքացիներին, որոնք ունեն սովորական անձնագրեր: Հատուկ (կանաչ), ծառայողական (մոխրագույն) կամ դիվանագիտական (սև) անձնագրեր ունեցողները Հայաստանի մուտքի արտոնագիր պետք է ձեռք բերեն կա՛մ հրավերի հիման վրա, կա՛մ Վրաստանում Հայաստանի հյուպատոսության դիվանագիտական ներկայացուցչություններից: Թուրքիայի քաղաքացիները, որոնք Հայաստան են այցելում հրավերի հիման վրա, չեն կարող վիզա ստանալ ժամանման պահին: Հրավերները[7] պետք է պլանավորված այցից 3-4 շաբաթ առաջ ներկայացվեն Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններ կամ ՀՀ արտաքին գործերի նախարարություն.

- Հայաստանում գրանցված իրավաբանական անձանց կողմից, կամ
- ՀՀ իշխանությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների կամ միջազգային կազմակերպությունների կամ էլ նրանց ներկայացուցիչների կողմից (ֆիզիկական անձինք հրավերը ներկայացնում են ՕՎԻՐ):

Անձնագրերի վերը նշված տեսակների համար վիզայի վճարը 5000 ՀՀ դրամ է (մոտ 9,60 ԱՄՆ դոլար), որը պետք է վճարել հրավերը ներկայացնելուց առաջ: Այս քաղաքացիները կարող են Հայաստան գալ միայն այն ժամանակ, երբ հրավերը հաստատվում է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից: Վիզայի տևողությունը կախված է հրավերում նշված ժամանման և մեկնման օրերից, իսկ ՀՀ-ում գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել 120 օրը (120 օր ՀՀ-ում գտնվելու դեպքում կիրառելի է համապատասխան գումարի չափը): Նման անձնագրեր ունեցող անձանց թույլ է տրվում մուտք գործել Հայաստան սահմանային անցակետում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրած պաշտոնական գրության հիման վրա: ՀՀ-ում գտնվելու ընթացքում այս քաղաքացիները պետք է ներկայանան ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ ստանալու իրենց վիզան: Հարկ է, որ նրանք իրենց վավերական անձնագրի հետ միասին ներկայացնեն նաև մուտքի վիզայի դիմումը:[8]
Հայաստանում օտարերկրյա քաղաքացիները կարող են ունենալ կացության հետևյալ կարգավիճակները՝[9]

ա) ժամանակավոր,
բ) մշտական,
գ) հատուկ:

Ժամանակավոր կացության իրավունքը կարող է տրվել, եթե առկա է Հայաստանում մինչև մեկ տարի կամ ավել ժամկետով բնակվելու հիմնավորում, օրինակ՝ կրթություն, աշխատանքի թույլտվության առկայություն, Հայաստանում ժամանակավոր

կացություն ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ երեխան լինելու հանգամանքը կամ Հայաստանում գործարար գործունեություն ծավալելը և այլն: Ժամանակավոր կացության իրավունքը տրվում է մեկ տարով՝ ամեն անգամ ժամկետը մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ: Եթե օտարերկրացիները ցանկանում են ինքնազբաղված լինել Հայաստանում և ստանալ ժամանակավոր աշխատանքային վիզա, նրանք պետք է իրենց բիզնեսը գրանցեն Հայաստանում՝ ներկայացնելով համապատասխան դիմում: Այնուամենայնիվ, նման դեպքերում պետական իշխանությունները կարող են այդ դիմումը հաստատել կամ մերժել՝ ըստ իրենց հայեցողության: Ըստ հայեցողության են դիտարկվում նաև այն դեպքերը, երբ օտարերկրացիները Հայաստան են այցելում վերը նշվածից զատ այլ պատճառներով: Օրինակ՝ եթե նրանք այցելում են Հայաստան մի շարք փոխանակման ծրագրերի շրջանակներում, առկա չէ այս դեպքերը կարգավորող օրենք: Այդ իսկ պատճառով պրակտիկայում Հայաստանում գտնվելու ժամկետը երկարաձգելու համար կիրառվում է Հայաստանից Վրաստան ելք և հետո նորից Հայաստան մուտք գործելու տարբերակը՝ ձեռք բերելով այցելության (զբոսաշրջիկի) վիզա:

Մշտական կացության կարգավիճակ կարող է տրվել, եթե օտարերկրյա քաղաքացին ապացուցում է, որ

ա) ունի ամուսին/կին կամ մոտ ազգականներ (ծնող, երեխա, քույր կամ եղբայր, պապիկ, տատիկ), որոնք ՀՀ քաղաքացիներ են կամ ունեն հատուկ կացության կարգավիճակ, ունեն բնակության վայր և ապրուստի միջոցներ և նախքան մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելը ապրել են Հայաստանում 3 տարի,

բ) ծագումով հայ են կամ բիզնես գործունեություն են ծավալում Հայաստանում:

Մշտական կացության կարգավիճակը շնորհվում է 5 տարի ժամկետով՝ ամեն անգամ 5 տարով ժամկետը երկարաձգելու հնարավորությամբ:

Արտաքսում

Երբ վիզայի կամ կացության թույտվության ժամկետը լրանում է կամ կացության կարգավիճակ չի շնորհվում, օտարերկրյա քաղաքացին պետք է կամավոր հեռանա Հայաստանից:[10] Եթե անձը կամավոր չի հեռանում Հայաստանից, ոստիկանությունը արտաքսման վարույթ է հարուցում և գործն ուղարկում դատարան:

Արգելվում է օտարերկրյա քաղաքացու արտաքսումն այնպիսի պետություն, որտեղ խախտվում են մարդու իրավունքները, մասնավորապես եթե անձը հետապնդվում է ռասայական, կրոնական, սոցիալական կարգավիճակի հիմքերով, քաղաքացիական կամ քաղաքական կարծիքի համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ նրանք կարող են ենթարկվել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի, պատժի կամ մահապատժի:[11]

Հատկանշական է, որ ապացուցման բեռը օտարերկրյա քաղաքացունն է՝ ներկայացնելու հետապնդման, խոշտանգումների, այլ անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի և պատժի սպառնալիքի վերաբերյալ ապացույցներ:

Ավելին՝ Հայաստանում բնակվող օտարերկրյա քաղաքացիների արտաքսումն արգելվում է, եթե

ա) նրանք անչափահաս են, իսկ նրանց ծնողներն օրինական հիմքերով բնակվում են Հայաստանում,

բ) նրանք հոգ են տանում Հայաստանում բնակվող անչափահասների կամ 80 տարեկանից բարձր տարիքի անձանց համար:

Կոլեկտիվ արտաքսումը նույնպես արգելվում է:

Արտաքսման վարույթի ընթացքում օտարերկրյա քաղաքացիներն ունեն նույն արդար դատաքննության իրավունքը, ինչ Հայաստանի քաղաքացիները:[12] Հայաստանյան դատարանները պետք է ընդունեն արտաքսելու կամ արտաքսումը մերժելու մասին որոշում: Այդ որոշումը կարող է բողոքարկվել, և այդ դեպքում արտաքսումը կասեցվում է:

Վիզայի ժամկետը լրանալու դեպքում սովորական անձնագիր ունեցողները մինչև ժամկետը լրանալու ամսաթիվը կարող են նաև երկարաձգել իրենց վիզաները ՕՎԻՐ-ում, հակառակ դեպքում նրանք ստիպված կլինեն տուգանք վճարել օդանավակայանում՝ վիզաների պայմանների խախտումների գրասենյակում, եթե ճամփորդում են օդով, կամ սահմանային անցակետում, եթե ճամփորդում են Վրաստանով՝ ցամաքային ճանապարհով: Տուգանքի համար ֆիքսված գումար չկա սահմանված, և այն որոշվում է վիզաների պայմանների խախտման գրասենյակի կողմից, այնուամենայնիվ, այն կարող է տատանվել մոտավորապես 100,000 ՀՀ դրամի սահմաններում: Ի տարբերություն սովորական անձնագրեր ունեցողների՝ հատուկ, ծառայողական և դիվանագիտական անձնագրեր ունեցողները չեն կարող երկարաձգել իրենց վիզայի ժամկետը, իսկ վիզաների պայմանների խախտումների գրասենյակում վճարման ենթակա տուգանքի մասին կարգավորումներ չկան: Նման դեպքերում նրանք ենթարկվելու են իրավական պատասխանատվության:

Ազատազրկում

Օտարերկրացին կարող է տարվել տարանցիկ գոտի կամ հատուկ սահմանված հաստատություն, եթե

- օտարերկրյա քաղաքացու վերադարձը ծագման երկիր անհնար է,
- անձը չունի անձնագիր,
- անձն անցել է Հայաստանի Հանրապետության սահմանը անվավեր անձը հաստատող փաստաթղթով,
- մերժվել է անձի ներկայացրած մուտքի վիզայի դիմումը,
- մերժվել է անձի կացության թույլտվության դիմումը:[13]

Օտարերկրյա քաղաքացուն տարանցիկ գոտի տեղափոխելուց հետո 24 ժամվա ընթացքում սահմանային հսկողության ծառայությունը պետք է դիմի դատարան՝ օտարերկրյա քաղաքացուն մինչև 90 օր ժամկետով կալանավորելու թույլտվություն ստանալու համար: Եթե 90 օր անց անձի վերադարձը հնարավոր չի լինում կազմակերպել, օտարերկրյա քաղաքացին ոստիկանությունից ստանում է ժամանակավոր թույլտվություն՝ 1 տարուց ոչ ավելի ժամանակահատվածով:

Օտարերկրյա քաղաքացին կարող է կալանավորվել և պահվել հատուկ նշանակության հաստատությունում, եթե կան բավարար հիմքեր կասկածելու, որ նա կարող է փախչել արտաքսման վարույթից կամ արտաքսման որոշման իրագործումից առաջ:[14] Օտարերկրյա քաղաքացուն տարանցիկ գոտում 48 ժամ պահելուց հետո ոստիկանությունը պետք է դիմում ներկայացնի դատարան՝ օտարերկրյա քաղաքացուն մինչև 90 օր ժամկետով կալանավորելու թույլտրվություն ստանալու համար:

Ձերբակալությունից հետո ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում ոստիկանությունը այդ մասին տեղեկացնում է կալանավորվածի ծագման պետության դեսպանությանը կամ հյուպատոսական ծառայություններին կամ Հայաստանում ապրող նրանց մտերիմներին: Թուրքիայի քաղաքացիների ձերբակալության դեպքում ոստիկանությունը այդ մասին հաղորդում է ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, որն էլ Վրաստանում Թուրքիայի դեսպանությանը տեղեկացնում է Հայաստանի տարածքում իրենց քաղաքացիների ձերբակալությունների մասին:

Ձերբակալված օտարերկրյա քաղաքացին կարող է պահվել հատուկ հաստատությունում մինչև արտաքսման վարույթի արդյունքում դատարանի ընդունած որոշման ուժի մեջ մտնելը, բայց ոչ ավել, քան 90 օր:

Կալանավորված կամ ձերբակալված օտարերկրյա քաղաքացիներն ունեն հետևյալ իրավունքները.[15]

- տեղեկացված լինել իրենց ձերբակալման կամ կալանավորման պատճառների մասին իրենց համար հասկանալի լեզվով կամ թարգմանչի օգնությամբ,
- դատարանում բողոքարկել իրենց վերաբերյալ ընդունված ցանկացած որոշում,
- որպես այցելու ընդունել փաստաբանի կամ այլ իրավական ներկայացուցչի (այդ թվում՝ հասարակական կազմակերպություններից), ծագման երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական ծառայությունների պաշտոնյայի: Թուրքիայի քաղաքացիների դեպքում դա անհնար է ապահովել Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պատճառով: Վրաստանում Թուրքիայի դեսպանությունը կարող է կապ հաստատել Հայաստանում գործող փաստաբանի հետ, որպեսզի տեղեկատվություն ստանա կալանքի տակ գտնվող անձի մասին և այնուհետև տեղեկությունը փոխանցի Թուրքիայում գտնվող հարազատներին: Կալանքի տակ գտնվող անձը կարող է ստուգել՝ արդյոք Վրաստանում Թուրքիայի դեսպանությունը կամ հյուպատոսարանը ունի հայ իրավաբանների ցանկը: Բացի այդ, կալանքի տակ գտնվող անձի հարազատները կարող են ձեռք բերել իրավաբանների ցանկը՝ կոնտակտային տվյալներով հանդերձ՝ այցելելով Փաստաբանների պալատի գրասենյակ կամ կայքէջ:[16]
- դիմել դատարան՝ խնդրելով վերացնել կալանքը և ազատ արձակել իրենց,
- ստանալ անհրաժեշտ բուժօգնություն:

Արտահանձնում

Օտարերկրացիների արտահանձնումը արգելվում է, եթե մեղադրանքի հիմք հանդիսացող արարքի համար նախատեսված է մահապատիժ կամ կան լուրջ հիմքեր կասկածելու, որ նրանք կարող են ենթարկվել խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:[17]

Անձը կարող է պահվել 40-օրյա ժամանակավոր կալանքի տակ արտահանձնման միջնորդություն ստանալու կամ արտաքսումը կանխող հանգամանքները պարզաբանելու նպատակով, եթե հանցագործությունը կատարվել է արտասահմանում, իսկ անձը ձերբակալվել է Հայաստանի տարածքում:[18]

Արտահանձնման նպատակով կալանավորումը կիրառվում է յուրաքանչյուր անգամ երկու ամիս ժամկետով, բայց ընդհանուր առմամբ չի կարող գերազանցել 8 ամիսը: Նույն կանոնը կիրառելի է ազատության զրկման հետ չկապված այլ խափանման միջոցների նկատմամբ:[19]

Ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի ունենալու փաստաբան, իմանալու, թե ինչում է մեղադրվում, բողոքարկելու քննիչի, դատախազի կամ դատարանի որոշումները, ունենալու թարգմանիչ, հաղորդակցվելու իր մտերիմ հարազատների հետ:[20]

Եթե արտասահմանում հարուցված քրեական գործը գտնվում է մինչդատական վարույթում, արտահանձնման թույլտվության կամ արտահանձնումը մերժելու վերաբերյալ որոշումները ընդունում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, իսկ եթե գործը գտնվում է դատական վարույթում կամ եթե տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, արտահանձնումը մերժելու վերաբերյալ որոշումն ընդունում է ՀՀ արդարադատության նախարարը կամ դատավճիռ կայացրած դատարանը՝ Արդարադատության նախարարի միջնորդությամբ:[21] Այս որոշումները կարող են բողոքարկվել Վերաքննիչ քրեական դատարան դրանք ստանալուց հետո 10 օրվա ընթացքում, իսկ Վերաքննիչ քրեական դատարանի որոշումները կարող են բողոքարկվել Վճռաբեկ դատարանում դրանք ստանալուց հետո 5 օրվա ընթացքում:

Օտարերկրյա պետության՝ արտահանձնման մասին խնդրանքը կարող է մերժվել, եթե

- անձին ապաստան է տրվել Հայաստանում,
- անձը հետապնդվում է քաղաքական, ռասայական կամ կրոնական շարժառիթներով,
- անձը հետապնդվում է խաղաղ ժամանակ զինվորական հանցագործություն կատարելու համար,
- հանցագործությունը կատարվել է ՀՀ տարածքում:[22]

Հայաստանը և Թուրքիան կարող են համագործակցել արտահանձնման ընթացակարգերի շուրջ՝ միջազգային բազմակողմ շրջանակային պայմանագրերի, օրինակ՝ ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի կամ միջազգային կազմակերպության, օրինակ՝ Ինտերպոլի միջազգային կազմակերպության կողմից հայտարարված հետախուզման ընթացակարգերի շրջանակներում: Այնուամենայնիվ, դիվանագիտական հարաբերությունների բացակայության պատճառով նման համագործակցությունը կարող է սահմանափակվել առանձին դեպքերով:

Ապաստան

Հայաստանում անձը կարող է ապաստանի համար դիմում ներկայացնել հետևյալ ընթացակարգերով.

- Հայաստանի սահմանին գտնվելու պահին՝ ներկայացնելով դիմում Սահմանային հսկողության ծառայությանը կա՛մ բանավոր, կա՛մ գրավոր, կա՛մ նշանների լեզվով,

կամ

- Հայաստանի Հանրապետությունում գտնվելու դեպքում՝ ներկայացնելով դիմում Պետական միգրացիոն ծառայությանը (ՊՄԾ) կամ ոստիկանությանը:[23]

Թեև վերը նշված տարբերակները լայնորեն կիրառվում են, հարկ է նաև նշել, որ անձը կարող է ապաստանի համար դիմում ներկայացնել նաև ոստիկանություն, նույնիսկ երբ կալանքի տակ է կամ ձերբակալված է: Այս դեպքում իշխանությունները պարտավոր են ցանկացած պարագայում ընդունել դիմումը:

Օտարերկրյա քաղաքացուն ապաստան չի տրվում, եթե լուրջ հիմքեր կան կարծելու, որ նա

- կատարել է հանցագործություն ընդդեմ մարդկության, խաղաղության, կամ թույլ է տվել պատերազմական հանցագործություն,
- կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն նախքան Հայաստանի Հանրապետությունում ապաստանի համար հայց ներկայացնելը,
- մեղավոր է ճանաչվել ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքների կատարման մեջ:[24]

Ավելին՝ ապաստանի տրամադրումը կարող է մերժվել, եթե անձը ժամանել է երրորդ, անվտանգ երկրից, որտեղ չկա հետապնդման և մարդու իրավունքների խախտումների վտանգ կամ ծագման երկիր վերադառնալու վախ, կամ որտեղ չկա համատարած բռնության, արտաքին ագրեսիայի, ներքին հակամարտությունների կամ հասարակական կարգը խախտող այլ վարքի սպառնալիք, և անձը կարող է վերադառնալ իր ծագման երկիրը:

Ապաստանի տրամադրման հիմքերը գնահատելու նպատակով ՊՄԾ-ի ներկայացուցիչները հարցազրույցներ են վարում: Արդյունքում ՊՄԾ-ն որոշում է կայացնում կա՛մ թույլատրել, կա՛մ մերժել ապաստանի տրամադրումը: Մերժման մասին որոշումը կարելի է բողոքարկել Վարչական դատարանում այն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:[25]

Սեփականության իրավունքներ

Օտարերկրյա քաղաքացիները ունեն սեփականության նույն իրավունքները, ինչ Հայաստանի քաղաքացիները՝ բացառությամբ հողի սեփականության, ինչի իրավունքը վերապահված է միայն Հայաստանի քաղաքացիներին:[26]

Դրամական փոխանցումներ

Ներկայումս Թուրքիան ոչ ֆորմալ պատժամիջոցներ է կիրառում դեպի Հայաստան և Հայաստանից կատարվող բանկային փոխանցումների նկատմամբ: Ցանկացած գործարք ենթակա է Արտաքին առևտրի ենթաքարտուղարության հաստատմանը: Միայն մի քանի մասնավոր բանկեր կան, որ առանձին դեպքերում թույլ են տալիս բանկային փոխանցումներ կատարել Հայաստան և Հայաստանից փոխանցումներ ստանալ:[27]

Իրավական աջակցություն

Եթե Թուրքիայի քաղաքացիները ունենան իրավական աջակցության կարիք, թե՛ մայրաքաղաք Երևանում, թե՛ մարզերում գործում են բազմաթիվ փաստաբանական գրասենյակներ: Ավելին՝ նրանք կարող են ծանոթանալ Հայաստանի փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում լիցենզավորված փաստաբանների ցանկին՝ այցելելով www.advocates.am կայքէջը: Տեղական փորձագետները կարող են աջակցել Թուրքիայի քաղաքացիներին՝ տրամադրելով իրավաբանական ներկայացուցչություն պետական և ոչ պետական մարմինների, դատարանների առջև՝ լրացնելով իրավական փաստաթղթեր, այդ թվում՝ վիզայի դիմումներ, կացության թույլտվության դիմումներ, ապաստանի հայցման դիմումներ և այլն: Նախկինում հաջողված համագործակցություն է եղել Թուրքիայի քաղաքացիների և տեղական փաստաբանների միջև քրեական, քաղաքացիական և վարչական վարույթներում:

1 ՀՀ Վիճակագրական տարեգիրք (2010-2019):

2 Հայաստան-Թուրքիա հյուպատոսական հարաբերությունների մասին քաղաքականության միջանկյալ համառոտագիր, Հայաստան-Թուրքիա փորձագետների երկխոսության խումբ, սեպտեմբեր 2018 թ.:

3 https://www.mfa.am/filemanager/consular/visa/uppon_arival_eng.pdf: Ցամաքային ճանապարհով Վրաստանից ՀՀ մուտք գործելու դեպքում Բագրատաշենի կամ Սադախլոյի անցակետերում Թուրքիայի քաղաքացիները պետք է այցելեն Թբիլիսիում ՀՀ դեսպանատուն և ստանան վիզան դեսպանությունից՝ ներկայացնելով նախարարության կողմից տրված հատուկ թույլտվության նամակ՝ ըստ իրենց անունների: Եթե իրավիճակի մասին դեսպանությանը նախնական ծանուցում է ուղարկվել, նրանք կարող են վիզան տրամադրել նաև նույն օրը: Թբիլիսիում ՀՀ դեսպանություն կարելի է դիմել միայն աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին: Այդ իսկ պատճառով կարևոր է ճամփորդությունը պլանավորել համապատասխանաբար: Թբիլիսիում ՀՀ դեսպանության կայքէջ՝ https://georgia.mfa.am/en:

4 https://evisa.mfa.am/

5 Վճարումների մասին թարմացված տեղեկությունների համար տե՛ս https://www.mfa.am/en/fees/:

6 2021 թ. հունիսի 21-ի դրությամբ 1 թուրքական լիրան համարժեք է 59,16 ՀՀ դրամի, իսկ 1 ԱՄՆ դոլարը 513,73 ՀՀ դրամ է:

7 https://www.mfa.am/filemanager/consular/visa/invitation_form.pdf

8 https://www.mfa.am/filemanager/consular/visa/visaappform.pdf

9 ՀՀ օրենքը օտարերկրացիների մասին, Հոդված 14:

10 Հոդված 30, նույն տեղում:

11 Հոդված 32, նույն տեղում:

12 Հոդված 33, նույն տեղում:

13 Հոդված 37, նույն տեղում:

14 Հոդված 38, նույն տեղում:

15 Հոդված 39, նույն տեղում:

16 Փաստաբանների պալատի կայքէջ՝ www.advocates.am, հասցե՝ Զաքյան 7-2, Երևան:

17 Հոդված 41, նույն տեղում:

18 Հոդված 478.2, Քրեական դատավարության օրենսգիրք:

19 Հոդված 478.3, նույն տեղում:

20 Հոդված 478.4, նույն տեղում:

21 Հոդված 479, նույն տեղում:

22 Հոդված 488, նույն տեղում:

23 Հոդված 13, Փախստականների և ապաստանի մասին օրենք:

24 Հոդված 11, նույն տեղում:

25 Հոդված 57, նույն տեղում:

26 Հոդված 60, կետ 6, ՀՀ Սահմանադրություն:

27 Հայաստան և Թուրքիա. հարաբերությունների և կարգավորման հեռանկարների ակնարկ, Ա. Այունց և Թ. Քյոսե՝ Բ. Բեջերմենի մասնակցությամբ, 2019, HDV հրատարակչություն, էջ 29:

Սույն աշխատանքն իրականացվել է Քրեսթ հիմնադրամի, Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի և Ուլոֆ Պալմե միջազգային կենտրոնի ֆինանսական աջակցությամբ: Ներկայացված բովանդակությունը ունի զուտ տեղեկատվական բնույթ և չպետք է դիտվի որպես պաշտոնական առաջարկ: Առկա գումարային տվյալները և տեղեկատվությունը համապատասխանում են փաստաթղթի մշակման ժամանակահատվածին:

Hrant Dink Foundation
Anarad Hığutyun Binası
Papa Roncalli Sk. No: 128 Harbiye 34373 Şişli / İstanbul
T: +90 212 2403361 - 62 | F: +90 212 2403394 | info@hrantdink.org | www.hrantdink.org